



ԻՆՉՊԵՐՍ ՄԱՏՉԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ուղեցույց ծնողների համար

Իրավունակ՝ Նինա Մովսիսյան



ԽՈՒՍԱՓԵՔ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԻՑ ԵԿՈՂ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒՑ ԿԱՄ ԴԻՏԵԼՈՒՑ



Ինտերնետային կայքերը և հեռուստատեսությունը ողողված են պատերազմի ավերիչ հետևանքների մասին բազմապիսի տեղեկատվությամբ, ինչը բացասաբար կարող է անդրադառնալ երեխաների հոգեվիճակի վրա: Ուստի պետք է վերահսկել և սահմանափակել երեխաների կողմից այդ նյութերի դիտումը: Ավերածությունների տեսարանները, հիվանդանոցներում վիրավորված մարդկանց տեսանյութերը և ֆոտոշարքերը կարող են հիմք հանդիսանալ տագնապայնության, վախերի և ֆոբիաների առաջացման համար, քանի որ երեխայի կողմից դրանք ճիշտ ընկալելու և վերլուծելու հնարավորությունները սահմանափակ են:

ՊԱՏԱՍԽԱՆԵՔ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԻՆ

Երեխաների մոտ բազմաթիվ հարցեր են առաջանում ստեղծված պատերազմական իրավիճակի հետ կապված: Այդ հարցերն անպատասխան թողնելու դեպքում մեծահասակները կարող են նպաստել երեխաների մոտ տագնապային ֆոնի և վախերի առաջացմանը: Այդ իսկ պատճառով երեխաների բոլոր հարցերին պետք է տրվեն պատասխաններ՝ շեշտադրելով զինվորների գործելությունը և բանակի անպարտելիությունը:



ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՔ ԵՎ ԽԱՂԱՐԿԵՔ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ



Հաճախ երեխաների մոտ մտահոգություն է առաջանում, թե ինչ պետք է անել, եթե թշնամին հասնի իրենց բնակավայր, սկսի կրակել կամ ոմբակոծել: Ծնողը չպետք է կորցնի իր ինքնաստիրապետումը, խուսափի պատասխանելուց կամ առավել ևս ցուցադրի սեփական մտավախությունները: Այս պարագայում երեխային պետք է ներկայացնել նման իրավիճակների համար սահմանված անվտանգության կանոնները. օրինակ այն, որ անհրաժեշտության դեպքում նրանք կկարողանան թաքնվել նախօրոք պատրաստված ապաստարաններում, կստեղծվեն համապատասխան անվտանգ պայմաններ և, որ ամենակարևորն է, իրենց կպաշտպանեն հայկական հզոր բանակի զինվորները:

Երեխան նաև պետք է ապահով իրեն զգա ընտանիքում, նա պետք է համոզված լինի, որ պաշտպանված է ծնողների կողմից:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՔ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԽՈՍԵԼ ԻՐԵՆՑ ՎԱԽԵՐԻ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտ է երեխային թույլ տալ խոսել իր վախերի մասին. երեխան պետք է տեղյակ լինի, որ նման իրավիճակներում վախենալը նորմալ է: Անհրաժեշտ է քննարկել, թե ինչն է առավել շատ վախեցնում նրան: Անորոշության և անհասկանալի երևույթների ճիշտ բացատրությունը և մեկնաբանությունը նպաստում է վախերի հաղթահարմանը: Սովորաբար այս իրավիճակներում երեխաներին փոխանցվում են մեծահասակների վախերը. այն, ինչ վախեցնում է ծնողներին, վախեցնում է նաև երեխաներին: Ուստի ծնողները պետք է խուսափեն սեփական տագնապներն ու վախերը ցուցադրելուց:



ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԵՂԵՔ ՀԱՆԳԻՍՏ ԵՎ ՁԵՐԾ ՄՆԱՑԵՔ ՁԵՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀՈՒՅՁԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒՑ



Բակում, դպրոցում, ընկերների շրջապատում անդադար քննարկվում են պատերազմական գործողությունները, և արդյունքում երեխայի մոտ ապահովության, պաշտպանության կարիք է առաջանում, ինչը նա փորձում է գտնել ընտանիքում: Ծնողները հանդիսանում են հենց այդ ուժն ու ապահովությունը: Ծնողների բացասական հույզերը՝ լացը, վախը, լարվածությունը, տագնապայնությունն անասելի հետք են թողնում երեխաների հոգեկան աշխարհի վրա: Այս ծանր իրավիճակում ծնողը երեխայի աչքերում պետք է ընկալվի որպես պաշտպանող, հանգիստ և իր

անվտարգությունն ապահովող հեղինակություն:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾԵՔ ՀԱՆԳԻՍՏ, ՈՒՐԱԽ ԵՎ ԱՊԱՀՈՎ ՄԹՆՈԼՈՐՏ

Երեխայի առօրյան պետք է զբաղված լինի մինչև պատերազմական իրավիճակն իրականացվող գործունեությամբ: Երեխան պետք է նախկինի նման դպրոց հաճախի, մասնակցի խմբակներին, իրականացնի դասապատրաստումներ, շփվի իր ընկերների հետ: Այսինքն՝ ծնողը պետք է հոգա, որ ներկա իրավիճակն ընթանա մաքսիմալ աննկատ և ողողված լինի ապագա հաղթանակի ուրախ սպասումներով և սահմանում դրական փոփոխություններով:



ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԵՔ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ



Երեխաների խաղերում կարող են տեղի ունենալ թեմատիկ փոփոխություններ. նախկինում զինվորիկներով չխաղացող երեխաները կարող են սկսել խաղալ զինվորիկներով, նկարել պատերազմ կամ սենյակը վերածել զինվորական շտաբի: Այս պարագայում անհանգստանալու առիթ չկա, քանի որ երեխաները, խաղարկելով պատերազմական գործողությունները, հաղթահարում են իրենց առջև ծառայած խնդիրները:

Մեծահասակները կարող են միանալ խաղին և աստիճանաբար խաղարկելով այդ գործողությունները՝ խաղը հասցնել դրական ավարտին:

ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ, ՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒՆԻ Ե՛Վ ՍԿԻԶԲ, Ե՛Վ ԱՎԱՐՏ

Մենք գիտենք, որ ցանկացած բացասական և դրական երևույթ կամ իրավիճակ ունի իր ինչպես սկիզբը, այնպես էլ ավարտը: Ուստի երեխան ևս պետք է տեղեկացված լինի, որ պատերազմն էլ մեր կողմից դիտվող ֆիլմերի ու մուլտֆիլմերի, մեր մասնակցությամբ խնջույքների կամ խաղերի նման ունի սկիզբ և կունանա նաև ավարտ: Երեխան պետք է գիտակցի, որ պատերազմն անվերջ չէ, և կգա ժամանակ, որ այն անպայման կավարտվի: Այս երևույթի գիտակցումը կրկին նպաստում է երեխաների մոտ տագնապայնության աստիճանի նվազմանը: Տագնապային վիճակների պատճառ է դառնում հիմնականում անորոշությունը, եթե ծնողը վերացնի այդ անորոշությունը հստակ բացատրություններով, ապա երեխայի տագնապայնությունը ինքնըստինքյան կնվազի:



- #Ո՛չպատերազմին
- #Խաղաղություն
- #Հաղթելունք

